

Մ Ի Ռ Ի Թ Ե Ա Ն Բ Ա Ն Ա Վ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ը

Անցեալ տարւոյ «Դրօշակի» սեպտեմբերի համարում (№ 7) յայտարարել էինք.

«Միութեան բանակցութիւններու առթիւ մեզ գիմող ընկերներուն կը յայտնենք, որ այդ բանակցութիւնները ատենէ մը ի վեր վարող չէզօք անձնաւորութիւնէն ստացւած գրութեան մը համաձայն չառով անոր վերջնական խօսքին կըստատուին Ամբողջ սրտով կը փափէինք, որ այդ խօսքը նպատակաւոր ըլլար լուրջ անկեղծ տարբերութեան համար».

Ներկայ ապրիլ ամսին ստացանք և ահա ամբողջութեամբ ու անփոփոխ հրատարակում ենք պ. Չէզօքի վերջին խօսք-գրութիւնը (Միութեան ոտորագրութեամբ):

Յարիզ, 20 ապրիլ 1902

Առ Արևմտեան Բիւրօ

Հ. Յ. Դաշնակցութեան, Ժընէվ

Ձեր 12 նոյեմբ. 1901 նամակով կը խնդրէիք որ Ձեզ անյապաղ յայտնեմ թէ ի՞նչ են եղբակցութիւններս միացման բանակցութեան մասին, և թէ արդեօք տրամադիր եմ միջնորդի դերս շարունակել:

Ահա հինգ ամիս է որ պատասխանս ուշացուցի. այսպէս վարուելով՝ նպատակս էր չի գահաժիծել ոչ ինչ, և որոնց որ պէտք էր՝ ժամանակ տալ անշահախնդիր, օրինական և խելացի որոշումներու ձաճախ մտնել:

Լռութիւնը ես ալ այլևս միութեան համար հարկաւոր բան մը չեմ նկատեր, և այս՝ թէ իբր անձ մը՝ որ ուզած էր օգտակար ըլլալ իբրեւ միջնորդ, և թէ իբր հայ՝ որ ուզած էր ազգային փափագի մը, կարծիքի մը արձագանգն ըլլալ Յեզ. Կուսակցութեանց մօտ, որոնք առեւտրական երկու տներու նման անկախ բաներ չ'ըլլալով ոչ տէրն են իրենց հաւաքած գրամին, ոչ ալ միակ դատաւորն իրենց ներքին և արտաքին գործերուն որ համարձակին դրսէն եկած խրատ մը ընդօրոնել:

Ձեռնարկիս հետեւեղներուն պատմութիւնը երեցաւ մնասմբ մը, Ամերիկայի Հայ Երեսիքի մէջ անցեալ աշնան. մնացեալն ալ մօտերս կը հրատարակուի: Բայց ինչ որ այսօր անհրաժեշտ կը տեսնեմ Ձեզ հաղորդել սա էական կէտն է. վաղուց արդէն օրինական անկաւորելութիւնը սկսած է միացման բանակցութիւն շարունակելու վեր. Հնչ. Կուսակցութեան հետ:

Այս մասին Լոնտօն մարտ 19-ին գիր մը գրած եմ, մի ամիս միջոց տալով պատասխան մը ինձ գրելու:

Չստացայ: Հետեւաբար, կրնամ խնդիրն հայ հասարակութեան առջև հանել:

«... Երբ որ, գրած եմ Լոնտօն, 1900-ին իմ միջնորդի գիմումներս սկսայ, վեր. Հնչ. Կուսակցութիւնն իր գլուխն ունէր 1898-ին, Աղեքսանդրիա հաւաքուած Ընդհանուր Ժողովէն ընտրուած Կեդրոնական Վարչութիւնն մը, և որուն հետ պաշտօնական յարաբերութեան մտայ միացման հարցին վրայ:

«Միջնորդութիւնն» ինքնաբերաբար սկսուած՝ այսպէս գործով իսկ փոխուեցաւ տրուած պաշտօնի:

«Ինչ և ալ ըլլայ, այսօր, որպէս զի ես ինքս կարող ըլլամ ըսել իմ վերջնական խօսքս, պէտք է որ վեր. Հնչ. Կուսակցութեան ներկայ պաշտօնական մարմինը պաշտօնապէս ինձ գրէ իր վերջին խօսքը թէ միացման ծրագրին և թէ նկատմամբ միջնորդութեան ինքրոյն վրայ: Բողորովին ազատ էք ունենալ ինչ տեսութիւն, ինչ բնութեամբ, ինչ վարդապետութիւն որ կուզէք այդ երկու ինքիներուն իւրաքանչիւրին վրայ:

«Պէտք է հանել երկու կուսակցութիւնները այն անորոշող և տարտամ կացութեան, ուր կը գտնուին իրարու դէմ իմ միջնորդութեան խնդրոյն պատրուակով: Ասոր աշխատիլը իմ պարագս է, ձեր ալ պարագս է ինձ հասցնել ուզած պատասխանիդ, բայց կ'ըրոն ահա ի վարչութեան կ'ընթացի (Բան մը որ եօթ ամիսէ իվեր կըսպասեմ, եւ եղած չէ դեռ, և որուն պատճառները այլտի հետզհետէ պարզուին):

«Հարկաւոր բան մ'ալ որ զանց տանել ամենեւին ներսի չէ սա է թէ՛ ձեր ինձ տալիք պատասխանագրին կցելու էք օրինակը այն արձանագրութեանց սրունք, ըստ հիմնական կանոնագրին, լռեցած պէտք է որ ըլլան նկատմամբ իւրաքանչիւր վարիչի ընտրութեանը: Հոն նշանակուած ըլլալու է որո՞ւ կողմէ և ո՞ր թուականին այդ ամէն մէկ ընտրութիւնը կատարուած է: Պարտաւոր էք տրիկա ընել սա հետեւեալ զխաւոր նկատումով որ հակաձառութիւն չի վերցնել. երբ որ 1900-ին գիմեցի վեր. Հնչ. Կուսակցութեան, գիտէի թէ այդ ատենուան կեդր. վարչութեան անդամներն ի՞նչքան են, երբ ոչ ի՞նչպէս ընտրուած են: Ունէի դէմ օրինաւորութեան լուրջ պայմաններուն մէջ 1898-ին ընտրուած և երկու տարիէ իվեր պաշտօնաւարող մարմին մը: Իսկ հիմա, ձեռքս ալ ապացոյցն եր ունիմ թէ այդ կեդր. վարչութիւնը գոյութիւն չունի. ջրուած՝ լուծուած է: Իսկ ամենիս ի գառ (որովհետեւ ես ալ վարիչ ընտրուած էի) ուրիշ վարիչներու ամբողջ ալ թափուր են հոն: Երեք վարիչ ինձ նամակով յայտնած են հրաժարուած ըլլալին և ալ հրաժարումներէն իվեր անցեր է արդէն եօթ ամիսէն աւելի: Համագումար՝ չորս հրաժարում:

«Այս կացութիւնը շատ ծանրակշիռ է: Վեր. Հնչ. Կուսակցութիւնը ինքնապաշտօնաւոր և ինքնապաշտօնաւոր օրինակէն ստատափած և խրատուած՝ իր հիմնական կա-

նոնագրին մէջ գրած է 15-րդ յօդուածը՝ որ կ'ըսէ թէ այդ պարագային մէջ, Կեդրոնական վարչութիւնը լուծուած կը համարուի: Բայց, մասնագէտներու խորհուրդէն մը, որպէս զի չորս վարիչի հրաժարան պարագային մէջ Կուսակցութեան գրաւին ուղղութիւնը չ'իյնայ կապտոյ կողմատուր մը՝ *ulterior*-ի մը ձեռքը, Վեր. Հնչ. Կուսակցութիւնն աւելցուցած է այդ յօդուածին ծաւ մ'ալ որ կը հրամայէ ընդհանուր ժողով գումարել նոր կեդր. վարչութիւն մ'ընտրելու համար:

Ներկայիս մէջ կողմատուրը եւ փաստակար ուղղութեան երկուքը նամանաւանդ սա պատճառով աւելի հիմնաւոր է որ ուրիշ երկու վարիչներ, մին՝ Ս. Միւսը՝ Ն., տարիներէ ի վեր գործնականապէս դադարած են վարիչի դեր մը կատարելէ, այնպէս որ այս երկուքին հետեւած՝ միւս չորսին հրաժարած ըլլալուն հետեւանքով, մնացած կայ 1898-ի Ընդհանուր ժողովին կողմէ ընտրուած միայն մէկ վարիչ—միայն մէկ—եւ ան ալ կը ընակի ոչ թէ կեդրոնը, այլ Ամերիկա:

Յետեւեալներով կ'ըսեմ. Չկայ կեդրոնական վարչութիւն, այլ կայ չորս հինգ անձերէ յաղակացեալ (որոնց երեքը՝ Լօնտօն, մին՝ Եգիպտոս, միւսը՝ Ամերիկա) խմբակ մը որ չկրնար համոզել հայ հասարակութիւնը թէ ինքն է որ կը ներկայացնէ Վեր. Հնչ. Կուսակցութիւնը, կը վայելէ անոր անդամներուն վստահութիւնը, կը գործադրէ կամքն ու փափագը, քանի որ ասոնց 1898-ի Ընդհ. ժողովէն այդ խմբակը ընտրուած չէ, ինչպէս, զոր օրինակ ես, վարիչ ընտրուած էի:

Ուրիշ նոյնքան ծանր օրինադանկութեան մ'առջեւ ալ ստիպուած եմ կանգ առնել: Ոչ թէ միայն վարիչներու հետեւանքն ու հրաժարիլը այլ եւ հոկտեմբեր 1898-էն ի վեր վաղուց արդէն աւարտած երեք տարւան շրջանը պարտք մը կը դնէր ընդհ. ժողով գումարելու: Այս մասին 51-րդ յօդուածը շատ բացայայտ է. «Ընդհանուր ժողով կը գումարել երեք տարին անգամ մը»:

Բոլոր այս նշանակած եւ թուած հանգամանքներս, որոնց ամէն մին հիմնական կանոնին թէ ոգւոյն եւ թէ առաջին յայտնօրէն հակառակ են, եթ ուրիշ ամիս առաջ գոյութիւն չունէին, եւ որոնք այնպիսի խոշոր եւ կործանարար զեղծումներ են որ ես ընակամարտ պիտի բռնադատուէի անձամբ հարց ու փորձ ընել, ջանալ հետեւ եւ մութին մէջ աչք մը նետել, պատին ու վարագործին ետեւը նայիլ, քննել եւ հասկնալ թէ ես ինքս, որ ասկէ երկու տարի առաջ, կը խօսակցէի միութեան վրայ օրինաւոր եւ ձեռնհաս Կեդր. վարչութեան մը հետ, այս վերջին ամիսներու մէջ իմ դէմս ո՞վ ունիմ. ընտրեալներ թէ ինքզինքնին այդպէս կոչողներ, հիմնական կանոնին հետեւող եւ հաւատարիմ վարիչներ թէ դիք-տաւ օրներ, կարգ ու կանոնի մարգիկ թէ պաշտպանող զուգահեռ:

Ակամ միջնորդութեանս գերիւ իրաւունքովն եւ նամանաւանդ իբրեւ հայ մը՝ որ ուրիշ հայերու հետ ենթարկուած ենք խելացի յեղափոխականներու գործերէն օգտուիլ եւ անագնիւններուն, նենգաւորներուն ընթացքէն վնասուիլ մեր կեանքին ու ինչքին մէջ, պէտք է որ գիտնանք թէ ի՞նչ է այդ խմբակը՝ զոր խաւարին մէջ, ստիպուած ենք, մենք աղգայիններս, յաջորդը նկատել այն կեդրոն. վարչութեանը որ ընտրուած էր 1898-ին Ընդհ. ժողովի մը կողմէ:

Ձեր բուն ծագումին վրայ եւ ձեր ներկայ կազմուածքին օրինաւորութեանը մասին լուսաւորուիլ ուղեղու ուրիշ իրաւունք մ'ալ ունիմ, միշտ ոչ միայն իբր միջնորդ, այլեւ իբրեւ հայ:

Հրաժարեալ Կեդր. վարչութիւնը Հ. Յ. Գալանկցութեան հետ միացման հարցը ձգեցելու եւ ի գլուխ հանելու համար յատկապէս արտօնուած էր Ընդհ. ժողովէն: Երբոր երկու տարի առաջ գիւնդի անոր, գիտէի թէ ձեռնհաս եւ արտօնեալ մարմինի մը հետ էր որ գործ պիտի ունենայի Ամէն կողմէ եւ իրարու ետեւէ ինձ հասած տեղեկութիւնները, զորս ստույգ կը հաւատամ,

ինձ կը բաւէր յօդուած թէ Լօնտօն նստող եւ կեդր. վարչութեան անունով գործող խմբակը եւ նամանաւանդ իր պետը՝ պ. Վահէ ընաւ երբէք ճանչցած չեն եւ հիմա ալ չեն ուղեր ճանչնալ իբրեւ օրինաւոր ոչ 1896-ի եւ ոչ ալ 1898-ի Ընդհ. ժողովները եւ անոնց որոշումները:

Ուրիշ նոյնպէս ծանր իրողութիւն մը. կը լսեմ թէ այդ խմբակը ու իր պետը գործած են Պոլիս եւ Բարիզ այլեւայլ թուականներով, բոլորովին իրենք իրենց պիտուն, կառայականարար, կարգ մը գործեր սրունց մասին հաշիւ չեն տուած եւ չեն ալ ուղեր տալ երբէք:

Իրաւ է թէ այս արարքները կրնան մինչեւ մէկ աստիճան ծածկուած կամ ներուած նկատուիլ չնորիւն ու միջոցովն այն պաշտօնին զոր պ. Վահէ ինքն իրեն յանձնել աւաւ Կեդր. վարչութիւնէն եւ զոր կատարելու համար 1900-ին Պոլիս գնաց վերջապէս—պաշտօն մը որուն կատարման ամենեւին չ'սպասուած եղանակին վրայ առանձնաբար պիտի խօսիմ—սակայն հակառակ այս վերջին ժամու գերկընդխառնումին՝ մեզ՝ գրսիններու, ընաւ կարելի չէ ընդունիլ որ 1896-ի, 1898-ի Ընդհ. ժողովները չ'ի ճանչցող մէկը—համար չ'ի տալու համար չ'ի ճանչցող, եւ այսուհետեւ ոչ համար տալու պարտքէն ազատած՝ քանի որ Կուսակցութեան գլուխն անցած է իր օք եթէ ոչ ըստ օրինի—կարենայ իրեն համախոհ խմբակին հետ հրապարակի վրայ հանդիսաւորապէս ներկայանալ իբրեւ այդ Ընդհ. ժողովներէն իսկ արտօնուած, իբրեւ անոնց կողմէ ձեռնհաս կարգուած միացման հարցին վրայ խօսելու եւ լուսակցելու:

Ես կը գտնուիմ ուրեմն հանդէպ այնպիսի մարմինի մը՝ որ ընտրուած չէ, որ տարիներէ ի վեր ունեցած է պաշտպանող զուգահեռ յատուկ զարտուղի ընթացք մը, ընկերներուն դէմ ըմբոստ, գործերուն մէջ կամայական եւ անհաւատարիմ, որ յաջողութեամբ վերջերս ձեռքն անցընել այնպիսի իշխանութիւն մը որ իրեն վեր. Հնչ. Կուսակցութեան կողմէ արտուած չէ ոչ Հիմնական կանոնին զմած ձեւովը եւ ոչ ալ ուրիշ կերպով, եւ որ կը կրէ Կեդր. վարչութիւն անունն որ իրենը չէ:

Ոչ ոք կրնայ Ձեր այս ըմբոստութեան եւ հերձուածին մէջ զԶեզ ճանչնալ իբր վեր. Հնչ. Կուսակցութեան պաշտօնական մարմինը եւ Ձեզի հետ բանակցիլ. Ձեր դէմը գտնուողն ո՞վ ալ ըլլայ, միջնորդ մը՝ ինչպէս ես, Կուսակցութիւն մը՝ ինչպէս Հ. Յ. Գալանկցութիւնը: Ինչպէս կը տեսնէք, Ձեզի շատ բաց կը խօսիմ, որպէս զի ոչ մէկու համար վստահ մը չ'իմաց յանկարծ ծակիլի գալու, որպէս զի առաջին առնուի ամէն թիւրիմացութեան, սխալմունքի, խարդախութեան եւ մեքենայութեան, եթէ կան:

Ուղածս յոյս է ամէնուհ համար:

Ձեզի կը մնայ, իմ այս նամակին վրայ, ինձ գրել Ձեր բոլոր պատասխանները, հերքումները, սպառնացողները ի մասին այն ամէն մէկ մեղադրութեան որ վրդովիչ կերպով կը կանգնի Ձեզի դէմ:

«Ձեր լուսութիւնը պիտի նկատեմ իբր հաստատութիւն մը Ձեզի վերագրուած սրարքներուն եւ նպատակներուն»....

Հրատարակութեան տալով այս նամակս (եւ միայն իմ պատասխանատուութեանս տակ) աւելորդ չեմ համարի աւելցնել թէ ես ինքս մեծ ուրախութեամբ եւ ալ ի տի առնեի Տոն նշանակած մեղադրութիւններէն այն կամ անոնք որոնց մասին պիտի ստացած ըլլայի Լօնտօնէն հերքում մը, բացատրութիւն մը, բայց պարզ ժխտում մը անգամ չեկաւ: Լռելով՝ ինձ իրաւունք կուտան հրապարակելը:

Ուղղամտութեան պարտք մըն էր որ կատարեցի ուրեմն իրենց յատուկ գրով այս մեղադրութիւնները հաղորդելով, հերքումի մը յոյսով: Հիմա, հայ հասարակութեան հետ եւ բոլոր ուղղամիտ յեղափոխականներուն հետ է որ պիտի մպասեմ հրապարակական հերքում մը, միշտ յօժար եւ պատրաստ գործուած սխալմունքը ճանչնալու:

Մինչև որ չի հերքուին (և դժբախտաբար չեն կրնար հերքուիլ) ես ապացուցեալ կը դատեմ հետեւեալ կէտերը.

1) Թէ Վեր. Հնչ. Կուսակցութեան պատկանող յեղափոխականները եօթ ութ ամսէ ի վեր պաշտօնական մարմին մը չունին գլուխներն:

2) Թէ մէկ քանի անձերու խմբակ մըն է որ զեղծումով մը և ապօրինութեամբ մը ինքզինքը կը կոչէ կեդրոնական վարչութիւն, դրամ՝ կը հաւաքէ թերթ կը հրատարակէ: Ամբարտաւան թեթեւօրէնութիւնն այն աստիճանին կը հասցնէ որ կը համարձակի Օսմ. Ապառկանաց Համաժողովին անձ մը իբր պատգամաւոր զօրէն Վեր. Հնչ. Կուսակցութեան կողմէ որ, մէկ քանի տարի առաջ, յատուկ վճռագրով մը, իր ծոցէն դուրս հանած է նոյն այդ անձը:

3) Թէ Հիմնական կանոնագիրը եօթ ութ ամսէ ի վեր դադրած ըլլալով գործադրուելէ, պարզ խօսքով ջնջուած ըլլալով, հետեւաբար և լուծուած է այդ կանոնով ծնունդ և կազմակերպութիւն ստացող Վեր. Հնչ. Կուսակցութիւնն ալ: Անոր անդամներն այլևս կազմակերպութիւն մը չունին:

Այս իրողութիւններն իրենց մէջ կը պարունակեն այն պատասխանը զոր պարտաւոր եմ տալ Հ. Յ. Դաշնակցութեան 12 նոյեմբ. նամակին: Եւ սա է.

«Անցեալ օգոստ. 1901-էն ի վեր չկայ Վեր. Հնչ. Կուսակցութիւնը ներկայացնող պաշտօնական օրինակ ուր մարմին մը, չկայ և ոչ իսկ (իբր կազմակերպութիւն) Վեր. Հնչ. Կուսակցութիւն մը որ անոր և ձեր միջև ունէ մէկը կարենայ միջնորդութիւն ընել: Կ'աւելցնեմ. գիտնական ու փորձառու միաբնակ մը յատուկ չէ յուսալ հասնիլ անխաբ ուսի կ'արդիւնքի մը անկազմ խմբակութեան մը կամ պաշտպանութեան հետ որոնք, իծնէ, հակամէտ են ձեւել ոչ թէ ինքզինքնին նշանակուած գործին վրայ, այլ այդ գործը իրենք իրենց վրայ»:

Ընդունեցէք յարգանքս հաւատարմօր

ՄԻԽԻԹԱՐ

Յ. Գ.—Հարկաւոր կը տեսնեմ ամէնուն աչքին տակ դնել Վեր. Հնչ. Կուսակցութեան կազմակերպող Հիմնական կանոնագրին հետեւեալ էական տրամադրութիւնները.

ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԻՐԱՆԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԸ

Յօդ. 1.—Կեդրոն. վարչութիւնը կուսակցութեան ընդհանուր ղեկավարող մարմինն է, ներկայ կանոնադրութեամբ իրեն ղեկավարող իրաւասութիւններու և պարտականութիւններու սահմանին մէջ:

Աւելորդ է շեշտել թէ այս կանոնագիրն ինք բառ մ'անգամ չպարունակէր վերաբերմամբ միացման խնդրոյն, որ դուրս կը մնայ կեդր. վարչութեան սահմանէն և կը մտնէ միմիայն պատգամաւորաց ընդ. ժողովին իրաւունքներուն մէջ, իրաւունք մը զոր կրնայ անոր յանձնել ինչպէս փոխանորդի մը:

ՀԱՇՈՒՆՏՈՒՈՒԹԻՒՆ

Յօդ. 13.—Կեդր. վարչութեան իրաւասութեան և պարտականութեան սահմանին մէջ գտնուող գործերուն ծախքերը վարչութիւնն ինք պիտի ընէ եւ հաշիւը պիտի ներկայացնէ ընդհանուր ժողովին օրինական տուեալով:

Յօդ. 58.—Կեդր. վարչութեան անդամները չեն կրնար պատգամաւոր ընտրուիլ, սակայն ընդ. ժողովին կ'անդամակցեն պատգամաւորներուն հաւատար իրաւունքով. միայն չեն մասնակցիլ իրենց համարատուութեան վերաբերեալ քուէարկութիւններուն:

Այս երկու յօդուածներուն համեմատ, 1898-ին ընտրուած եօթ վարիչներն ալ, և կամ պակասութեան պարագային ասոնց տեղ ընտրուածները իրաւունք ունին հրաւիրուելու ընդ. ժողովին, և պարտաւորութիւն ունին հաշիւ տալ օրինական տուեալով:

ԳՈՒՄԱՐՄԱՆ ՀՐԱՆԻՐ

Յօդ. 60.—Կեդր. վարչութիւնը երկրի նախնայնորո հրաւիրագիրը պէտք է ուղարկէ ժողովի գումարովին համար որոշուած ժամանակէն գէթ վեց ամիս առաջ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ԲԱՆԿԱՅՈՒՄԸ

Երկրին տալիք պատգամաւորներուն վրայ զանց կ'ընեմ խօսք ընել, իսկ արտասահմանի մասին 53-րդ յօդուածը կ'ըսէ.

Կողկաս ևւ Անդրկովկաս պիտի աւան երկու պատգամաւոր, Պարսկաստան պիտի աւան մէկ, Կիպրոս՝ մէկ, Պուլկարիա՝ մէկ, Ռումանիա՝ մէկ, Յունաստան՝ մէկ, Ամերիկա՝ երկու պատգամաւոր:

Այս երկիրներն ալ իրարմէ շատ հեռու ըլլալով, ամէն ոք կը զգայ թէ պարտաստելու հնար և միջոց տալու համար անոնց պատգամաւորներուն որպէս զի ի մի վայր գումարւին ընդհ. ժողով կազմելու համար, առ նուազն երեք չորս ամիս առաջ հրաւիրագիր ստանալու են:

ՄԻԽԻԹԱՐ

Պատե՛հ ենք համարում հրատարակել Լօնդօնից մեզ ուղղուած մի ուրիշ գրութիւն՝ Հնչակեան կեդրոնական վարչութեան կնիքով:

Լօնտօն, 1 ապրիլ 1902

Հ. Յ. Դաշնակցութեան

Արեւմտեան Բիւրօին

Ժընէվ

Յարգելի հայրենակիցներ

Ուրախութեամբ կ'իմացնենք Ձեզ որ Հին և Վերակազմեալ Հնչակեան երկու հաստուածներուն միջև Միութեան բոլոր պայմաններուն վրայ վերջնական համաձայնութիւն գոյացած ըլլալով՝ Հնչակեան Միութիւնը կատարուած է:

Կարելի եղածին չափ շուտ, ամբողջ կուսակցութեան քուէով, պիտի ընտրուի Միացեալ ու միակ Հնչակեան Կուսակցութեան Կեդր. վարչութիւնը, որ պաշտօնապէս պիտի հաղորդէ Ձեզ իր կազմութիւնը և որուն հետ է որ պիտի կրնաք այլ ևս ուղղակի բանակցութեան մտնել Միութեան մասին, երբ ժամանակը հասած կ'նկատէք:

Սիրելի է մեզ յուսալ որ մինչև միացեալ ու միակ Հնչակեան Կեդրոնին կազմութիւնը, ի վիճակի կ'ըլլաք ուղղակի բանակցութեանց ձեռնարկելու, որով կարելի կ'ըլլայ վճռական քայլն առնել դէպի հայ յեղափոխական ուժերու ամբողջական բաղձալի միացումը:

Ընդունեցէք մեր յարգանքները

Հնչակ. Կուս. Կեդր. վարչութեան կողմէն՝

Ատենադպիր
(Ստորագրութիւն)

Ատենապետ
(Ստորագրութիւն)

Կ Ն Ի Ք

Կըսպասենք ուրեմն Հնչակեան միացեալ կուսակցութեան կենտրոնի կազմելուն: Իսկ առ այժմ՝ թող թողլ տրուի մեզ երկու խօսք ասել ՝ Միութեան՝ ապագայ բանակցութիւններին առթիւ:

Հրապարակի վրայ գտնուում են դեռ ևս մարդիկ — սակաւաթիւ, բարեբախտաբար — որոնք չնայած մեր օր՝ եկտիվ ընթացքին և մեր բոլոր ջանքերին՝ համաձայնութեան գալու յեղափոխական մաքուր տարրերի հետ՝ շարունակում են մեղադրել մեզ պառակտումի ու ւնակցականութեան մէջ և մեր անհրաժեշտ վերապահումները, մեր միանգամայն հասկանալի յապաղումները բացատրում են իմաստ մեր անկեղծութեան:

Այդ փնասակար տրամադրութեանը քիչ չեն նպաստում այն անմտած յոխորտանքներն ու յայտարարութիւնները, որոնք գալիս են պաշտօնական օրգանից և որոնք հանրային կարծիքը այս կամ այն ուղղութեամբ գրգռելու բնոյթը ունին:

Բացէ իբաց յայտարարում ենք, որ մենք դէմ ենք բանակցութիւններ վարելու այդ մէթօդին և որ ոչ մի յոխորտանք, ոչ մի պաշտօնական ազդարարութիւն՝ որքան էլ նա իր վրայ «անշահախնդրութեան», «աներկդիմութեան» դրօշմը կրէ, — չպիտի շեղէ մեզ մեր բռնած ըն-

թացքից, ինչպէս և առհասարակ ոչ մի «կարծիք» կամ «պահանջ», որ չէ հիմնւած առողջ դատողութեան վրայ, այլ միայն արդիւնք է կրքի ու քաղաքացիական տհասութեան՝ չէ կարող արժանանալ մեր ուշադրութեան:

Որքան մենք սրտանց անպայման համակրող ենք բոլոր յեղափոխական նկարագիր ունեցող ուժերի համախմբման՝ այնքան և գարշում ենք «միութեան» յախուռն, անիմաստ ազդակներին, այնքան և երկիւղ ենք կրում այնպիսի մի հեռապատկերից, ուր — այս կամ այն կերպով վերջապէս իրագործւած — «Յեղափոխական ամբողջական միութեան» ծոցում առաջին վայրկեանից իսկ երևան կը գայ կազմալուծման աղետաբեր սաղմը:

Եթէ մեր նպատակը պէտք է լինի՝ յեղափոխական գործը կազմակերպել և ոչ կազմալուծել, ապա պարտաւոր ենք միութեան բանակցութիւնների մէջ լինել շըրջահայեաց և խստապահանջ:

ԱՐԵՎԻԿԱՆԻ ԲԻՒՐՈ